

ՄՇԱԿ

Տարեկան զինք 10 բուրլի, կես տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Պ Ի Բ Գ Ի Բ Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Դ արեա Անդրէասեան և Նատալեա Դաւթեան խանութ մեանց ներքեւ,
սրտից ջառով յայտնելով ազգականներին և բարեկամներին առաջինը՝ իր ամուսնու,
երկրորդը իր սիրելի որդու.

Բ Ա Ր Ս Ե Ղ Պ Ե Տ Ր Ո Ս Ե Ա Ն Խ Ա Ն Դ Ա Մ Ե Ա Ն Յ Ի

մահը, խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեանը, ապրիլի 10-ին, առաւօ-
տեան ժամի 10-ին, իր բնակարանից, որ գտնվում է վանքի փողոցի փլաւ,
սեպհական տուն, № 7, դէպի վանքի եկեղեցին: Ամբիճքը՝ երեքշաբթի, ապրիլի
9-ին, երեկոյեան 7 ժամին: 1—1

Շուշան Զովհանէսեան Բարտաշեանց, Աննա և Բարսեղ Առաքելեանցներ, սրտի
ջառով յայտնելով առաջինը իր ամուսնու, երկրորդը՝ եղբոր և երրորդը իր մօր-
եղբոր.

Ա Ր Տ Ե Մ Ե Ի Գ Ր Ա Ֆ Ե Ա Ն Բ Ա Ր Տ Ա Շ Ե Ա Ն Յ Ի

մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին՝ շնորհ բերել յուզարկաւոր-
ութեանը, որ տեղի կունենայ հինգշաբթի, ամսի 11-ին, առաւօտեան 10 ժա-
մին, սեփական տնից, Սօլուի, Օրթոփակայա փողոց, վաղնեսնակայա փողոցի մօտ,
դէպի Զորաշէնի Աւետեանց եկեղեցին: Ամբիճքը կը կատարվի չորեքշաբթի, ամսի 10-ին, երեկոյեան 7 ժամին: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անկախ դատարան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչը
խաղաղութեան ժամանակ. Հայոց թատրոն.
Նամակ վերին-Ազուլիսից. Նամակ խմբագրու-
թեան. Նամակ խմբագրութեան. Ներքին բարեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. վերջին տեղեկութիւն-
ներ. Նամակ թիւրքալոյց. Նամակ Պարսկաստա-
նից. —ՀԵՌԱՎԻԴՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՊՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ամերիկա-
յից.—Armenian Poeme.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Մ Ա Կ Ա Մ Ե Ր Ի Կ Ա Յ Ի Յ

Պօստօն, մարտի 18/30-ին

ARMENIAN POEME

Երկու չարափ առաջ լոյս տեսաւ օր. Պարսէ-
լի թարգմանած հայերէն բանաստեղծութեանց
մի հաւաքածոյն այս. վերնագրով. «Armenian
Poeme. Rendered into English verse. By Ali-
ce Stone Blackwell.—մի գեղեցիկ գրքոյ՝ ազ-
նիւ թղթով և մարտի տպագրութեամբ, ճակատը
զարդարած փառաւ-Փաթիլայի մի յաջող պատ-
կերով: Լրագիրներու և հասարակութեան ցոյց
տուած սիրալիր ընդունելութիւնը և սրան իբր
արդիւնք՝ գրքոյկին այս սուղ միջոցին երկրորդ
տպագրութեան համեմը կը դրէ զիս մի քանի
խօսքով «Մշակի» ընթերցողները ծանօթացնել
գրքին պարունակութեան հետ:

Օրիորդ Պարսէլէ ծանօթ է այստեղ իբր խմ-
բագիր և առեւտրան, և ժամանորայէն ջատա-
գով «կանանց ըռէի իրաւանց»: Սակայն, չը
նայելով իր ծանր մտաւոր աշխատութեան՝ օ-
րիորդը միշտ ժամանակ գտած է անթիւ յօ-
դուածներով և առեւտրախօսութեամբ իր հայրե-
նակցաց հետաքրքրութիւնը և համակրութիւնը
արթնցնել զէպի հայերը և իրենց դատը: Այս
ամենուն հետ թարգմանած է նաև հարկերի չափ
հայերէն ոտանավորներ, որք պարբերաբար հրա-
տարակուած են Պոստօնի, Նիւ-Եորքի և Չիքա-
կօյի ալ և ալ թերթներու մէջ: Այժմու հատորը
կը պարունակէ այդ թարգմանութեանց կարե-
ւորներէն 60 հատ. 12-ը Գուրեանէն, 2-ը Նաւ-
րանէանէն, 7-ը Նար-սէյէն, 4-ը Պէշիկիաշեա-
նէն, 14-ը Պատկանեանէն, 8-ը Արշալանէն, մնա-
ցեալները զանազան: Եղիշէի 5-րդ դարու հայ

ԱՆԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Դատաստանի և դատաւորի անկախու-
թիւնը այն հիմնական սկզբունքներից մէկն է,
որի համար կռւել և զոհվել են մարդ-
կային մօրը շատ փայլուն ներկայացուցիչ-
ները: Միայն այդ անկախութեամբ կարելի
է ապահովել արդարադատութիւնը, միայն
այդ անկախութեամբ է հնարաւոր այժ և
վատահոլութիւն տալ դատաւորին, որպէս զի

կանանց նկարագրութեան թարգմանութիւնը դը-
րուած է իբր նմուշ հայերէն արձակ դատական
բանաստեղծութեան:

Հեղինակը, ինչպէս կըսէ առաջաբանին մէջ,
անմասն լինելով հայերէնի, իր մի քանի հայ
բարեկամաց կատարած արձակ բառական թարգ-
մանութիւններէն առաջնորդուել է, որով վախ
կը յայտնէ, թէ թերեւ շատ սխալներ սպրդած
լինին գրքին մէջ: «Բայց, կը յաւելու, ինչպէս
հայ ազգիկան մը գեղեցկութիւնը յաճախ կերելի
իր հնոտիներու մէջէն, նոյնպէս կը յուսամ թէ
հայերէն բանաստեղծութեանց մի քանիին գե-
ղեցկութիւնը տեսանելի պիտի լինի նոյն իսկ
իրենց անգլիական աղբաւ հանդերձներու մէջ»:

Հատորը կարգաւ վերջ՝ մարդ համեմատութեան
զատ ուրիշ պատճառ մը չը կրնար գտնել այս
նմանութեան, որչափ որ իմաստի ճշգրտութեան և
լեզուի ճշտութեան վրա է լնդդրու: Հայերէն
թարգմանութիւններ տեսած ենք անգլիացի բա-
նաստեղծներէ, զորս բաղդատելով իրենց բնա-
գրերին հետ, մարդ կը կարծէ, թէ հայերէնի աղբա-
ւորութիւնը միայն ապացուցանուած համար թարգ-
մանուած են—օրինակ մեր բանաստեղծներու
ծածած կրօնական երգերը: Օր. Պարսէլէ թարգ-
մանութիւնները կրնան մրցել ամենէն յաջող հայ
անգլիագէտ թարգմանչին գործերուն հետ: Իսկ
ոտանավորներու լեզուի մասին քննադատներ և
խմբագիրներ որոշ վճիռ տուին՝ «չնորհալից և
կորովալի» կոչելով զայն: Այսպէս, հեղինակը
շատ յաջող եղանակաւ լուծել է լեզուի խնդիրը,
օգուտ ըսողներով անգլիերէնի ճշտութեան, սրով
կարելի եղած է նոյն իսկ ամենէն աւելի ա-
ռանձնապատու (idiomatic) բացատրութեանց հա-
մադատասխան օճը գտնել, առանց բնագրին ա-
րեւելեան յատկանիշը կորսնցնելու:

Սակայն միայն բառերը չեն, որ կը կազմեն
բանաստեղծութիւնը, իմաստն և լեզուէն ան-
զին կայ բանաստեղծութեան ոգին: Այդ ոգին
ըմբռնելու համար չը բաւեր միայն գրքի մէջ
կարգաւ ընթերցաններ, պէտք է զայն արտա-

նա աներկիւզ և համարձակ կերպով ար-
ձակի իր արդար որոշումները և վճիռնե-
րը: Քաղաքակրթած հասարակութիւնների
համար դատարանի անկախութիւնը դար-
ձել է նրա ամենաթանկ սեփականութիւն-
ներից մէկը և երբեմն-երբեմն նրա դէմ
զինելով խաւար ձգտումները մեծ զիմարու-
թեան են հանդիպում հասարակական
կարծիքի կողմից:

Այդ կողմից շատ ուսանելի են պրուսա-
կան պատգամաւորների ժողովում նորերս
տեղի ունեցած վիճաբանութիւնները, որոնց
միջոցին նոյն իսկ պահպանողականներից
և կղերականներից շատերը ամենախիստ
կերպով հարուածում էին ժողովին ներկա-
յացած ծրագիրը, որի նպատակն էր
սահմանափակել դատաւորների ընտրու-
թեան սահմանները: Այդ ծրագրով միմիայն
թուլութիւնը կամեւում էր իրան վերապահել
իրաւունք՝ նախօրոք ընտրութիւն անել
իրաւագէտների մէջ և ապազայ դատաւոր-
ների թիւնաճութեան համար թողնել միայն
նրանց, որոնք իրանց բարոյական յատկու-
թիւններով անելի ապահովութիւն են ներ-
կայացնում և մանաւանդ ունեն տալիս և
հանգստութիւն»:

Յայտնի ազատամիտ պատգամաւոր Մուն-
կել այդ առիթով արտասանեց մի նշանաւոր
ձառ: Նրան միացան միւսները և ներկա-
յացած ծրագիրը չընդունվեց:

«Այդ ծրագրի պաշտպանները, ասաց
Մունկել, առարկում են, որ դատաւորու-
թիւնը դրանով կը լաւանայ, որովհետեւ
բազմաթիւ թիւնաճութեանց կընտրվելու և ա-
ւագոյնները: Բայց ի՞նչպէս պէտք է
հասկանանք այդ խօսքը: Մինչև այժմ մենք
զիտէինք, որ իրաւագէտը, 3—4 տարի

գրող ժողովուրդին կեանքը մօտէն ուսումնասի-
րել, զգալ անոր վիտերը և հանդէսները, դիտա-
կից լինել անոր յայտնուն և վախերուն: Առանց
այս հոգեկան յարաբերութեան այդ ժողովուրդեան
գրականութեան մի ընդհանուր արտաքին մասը
միայն հասկանալի կը լինի, իսկ ինչ որ կը վե-
րաբերի նոյն իսկ ժողովուրդեան ցեղական, ներ-
քին կեանքին, կը մնայ ծածկուած: Որքան սերտ
կապուած լինի բանաստեղծը իր ժամանակի և
միջավայրի հետ, այնքան զգուշ կը լինի թարգ-
մանչի գործը: Հայ բանաստեղծները իրենց առհմա-
յին կեանքի սահմանէն դուրս ելնել չեն յանդգնած:
Հայ հանձնարը իր ցուելով և վշտերով զբաղած՝
տիեզերական լինելու վառապիրութիւնը չէ ե-
րազեր իսկ, հետեալաբար մեր բանաստեղծներու
թարգմանութիւնը լուրջ գիտարութեանց պիտի
հանդիպի միշտ:

Ջարմանալի է սակայն զիտել, թէ որ աստի-
ճան յաջողած է ամերիկացի օրիորդը ըմբռնելու
հայ բանաստեղծութեան ոգին, հակառակ բոլոր
այս աննպատ տարազայից, այս յաջողութիւնը
թերեւ վերաբերել է իր վերին աստիճանի հա-
մակրութեան զէպի հայերը և իրենց բաղդը:
«Մայր Արաքսին» թարգմանութիւնը հրաշակեալ
մ'է, յաջող են առհասարակ փառաւ-Փաթիլայի
բոլոր գործերու թարգմանութիւնը, որք պահած
են բնագրի պարզութիւնը, կորովը: Նար-սէյի ոտա-
նավորներէն մի երկուսը, օրինակ, «Թէ ինձ տա-
վին»-ը, «Առ քոյն իմ»-ը շատ գեղեցիկ են, մանա-
ւանդ առաջինը, որը մի քանի տեղեր արտասովոր
տեսայ, իսկ կան ուրիշներ, որք թարգմանուելու
իսկ արժանի չէին, օրինակ, «Նորածիլ Տերեւը»:
Ալիշանի ոտանավորները պահած են զբարբի
ցրտութիւնը, թէ և մի քանի բնագրին աւելի ո-
րոշ եղանակաւ ի յայտ կը բերեն արուեստագէ-
տը. «Պալատը» և «Լուսնակը» նոյն զգայուն
օրիորդ և հոգին ցոյց կուտան Պէշիկիաշեանի
գործերէն գեղեցիկ է «Կու զով խնդրեմ», իսկ
«Գարունը» և «Եղբայր եմ մենք» կարելի է
կատարեալ անաղուղտութիւն համարել. մնացեալ-

գործնական պարագմունքներից յետոյ, բնու-
նելով պետական ընտելութիւն, տալիս է որ
և է ապաշոյց իր դիտութեան և առաջա-
դիտութեան մասին: Ի հարկէ, դա իղէպա-
կան մի չափ չէ, բայց նրա փոխարէն աւե-
լի կատարեալը դեռ չէ գտնված: Անկասկած՝
դեռ բաւական չէ դիտութիւնը և ընդու-
նակութիւնը, անհրաժեշտ է և բարոյական
ապահովութիւն: Բայց այդ հանգամանքը
ուշագրութեան է առնվում և ներկայումս
ոչ մի թեկնածու, ինչքան էլ նա ընդու-
նակ անձն լինի, չէ կարող դատաւորի
պաշտօն ստանալ, եթէ նրա անցեալ կամ
ներկայ կեանքի մէջ նկատված լինի մի
որ և է բարոյական բիծ: Մյանից աւելի
ի՞նչ էք ցանկանում: Իսկ եթէ իրաւունք
կը տանք միմիայնութեան՝ սեփական ընտ-
րութիւնները անել այս գործում, դրա-
նով մենք լայն դուռն կը բանանք կամա-
յականութեան առաջ: Արդէն լսվում են
ձայներ, թէ պէտք է գերադասել դատաւոր-
ների ծագումը և տակտը: Ոչ. դատաւոր
լինելու համար չը պէտք է նշանակութիւն
ունենան ոչ ծագումը, և ոչ էլ կողմնակի
արտօնութիւններ: Ինչ վերաբերում է աւա-
տին, մենք զիտենք, որ այդ խօսքով շատ
անգամ հասկացվում է իշխանաւորին հա-
մակրալիկը, դուր գալու յատկութիւնը:
Այդ դատաւորներին էլ կը լինեն անկախ,
բայց ինչպէս մի անգամ Բամբերգեր ասել
էր՝ «անկախ իրանց համոզմունք-
ներին»:

Բուռն, խելացի դիմադրութիւնը, ինչպէս
ասացինք, մեծ ազդեցութիւն ունեցած և
ծրագիրը չընդունվեց: Գերմանական ան-
կախ մամուլը այս գործում էլ մեծ ծառա-
յութիւն մատուցեց: Նա արդէն պատրաս-

ները միջակ են: «Քաջօրդին» կը պարունակէ
մի քանի սխալներ, վերջին համարը ամբողջ-
ովն ալարիւղած է: Գուրեանը ամենէն զբաղ-
ղը եղբւ է: «Լճակէն» և մէկ երկու սիրային ո-
տանավորներին դատ մնացեալներու թարգմանու-
թիւնը բնագրին ոչ կորով և ոչ հրապոյրը պա-
հած են: Գուրեանի յանդուգն և կատարի բացա-
տրութեանց կորովը պահելու ջանքը թարգմա-
նութեան տուած է մերթ արուեստակեալ և
մերթ զգայնիկ երկույթ մը, որոց երկուքն ալ
օտար են մեր ըմբոստ բանաստեղծին ազատ
ոգոյն: Պայքարի լեզուն աւելի պատշաճ եղանա-
կաւ պէտք էր արտայայտել Գուրեանի «Վերջին
հաւաչանքը», որ վերջին լալկան ողբի մը երե-
ւոյթը աւելի է:

Նախադեանից «Մանկութեան օրերը» շատ
գեղեցիկ կը սկսի, բայց միօրինակ կը շարունա-
կուի նոյն մեղմ եղանակով, մինչդեռ բնագրին
մէջ բանաստեղծը կարծես իրօք կը փչէ քնարը
վերջին համարներուն մէջ: Սակայն ինչ որ հե-
ղինակը պակասցուցեր է կորովին, աւելցուցեր է
հնոցի և փափկութեան, այս ևս հաւանականա-
բար սեռական աղեցտութեան տակ: Թերեւս այդ
մը աւելի լաւ թարգմանել Գուրեանը կամ Նաւ-
րանէանը: Ի բաց առեալ Պէշիկիաշեանի «Եղ-
բայր եմ մենք» և «Գարունը», մեղմ և ներ-
դաշնակ երգերը կարծես նոր հրապոյր մատու-
ցած են անգլիերէնի մէջ, նմանութիւնները ա-
ւելի չնորհալի, իմաստի չղիման աւելի որոշ և
բացատրութիւնները աւելի զանազանեալ կը
թուին, քան բնագրին մէջ:

Գրքոյից ունի ուրիշ բազմակողմանի արժա-
նիքներ և պակասութիւններ, զորս մի առ մի
բացատրելու համար ոչ ժամանակ և ոչ կարողու-
թիւն կը բաւէ. կը յուսամ, թէ մեր կարող բա-
նասիրաց տաղանդութիւնը գրաւելով, մի լուրջ
ուսումնասիրութեան նիւթ կը գտնուայ:

Արմէն

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 633.